

**ԳՈՌ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

**ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) հոդված 19-ը, որը վերնագրված է՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը», սահմանում է հետևյալը.

«Պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության ապահովումն իրականացնում են այդպիսի գաղտնիք կազմող տեղեկություններ տնօրինող, դրանց օգտագործմամբ աշխատանքներ կատարող պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները՝ իրենց իրավասության սահմաններում և իրենց առջև դրված խնդիրներին համապատասխան:

Պետական մարմիններում, ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության կազմակերպման պատասխանատվությունը դրվում է դրանց ղեկավարների վրա:

Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործմամբ կատարվող աշխատանքների ծավալից կախված՝ պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարների կողմից ստեղծվում են պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնց գործառնությունները որոշում են նշված ղեկավարները Հայաստանի Հանրապետության կառավարության նորմատիվ իրավական ակտերին համապատասխան՝ հաշվի առնելով իրենց կողմից տարվող աշխատանքների առանձնահատկությունները»:

Առաջին իսկ հայացքից երևում է, որ «Պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը» հոդվածում խոսքն առանձին պետական մարմիններում, ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպման մասին է, ինչը, մեր կարծիքով, ակնհայտ անհամապատասխանություն է վերնագրի և բովանդակության միջև: Ասվածը հիմնավորելու համար նախ փորձենք պարզաբանել «կազմակերպում» եզրույթը, որը կօգնի ուրվագծել քննարկվող հոդվածի գործողության շրջանակները:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» «կազմակերպել» բառն ունի տասը բացատրություն, որոնցից առանձնացնենք քննարկվող հոդվածի բովանդակությանն առավել

առնչվող երկուսը. «2. մի որևէ նպատակի կամ գործի հաջող իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել՝ ջանքեր գործադրել» և «4. մի բանի մեջ կարգ մտցնել՝ սահմանել, կարգավորել»<sup>1</sup>: «Իրավաբանական հանրագիտարանում» (ռուսերեն) «կազմակերպումը» բացատրվում է որպես «որևէ ոլորտում համաձայնեցված, ներքին կարգապահության վրա հիմնված գործունեության ապահովում»<sup>2</sup>: «Անվտանգության ժամանակակից հանրագիտարանային բառարանում» (ռուսերեն) «կազմակերպում» բառը բացատրվում է որպես «2.ամբողջի՝ կառուցվածքով պայմանավորված մասերի կարգավորվածություն, համաձայնեցվածություն, փոխազդեցություն»<sup>3</sup>:

Միևնույն ժամանակ՝ «կազմակերպումը» սերտորեն կապված է «կառավարում» հասկացության հետ: «Կազմակերպման» և «կառավարման» հարաբերակցությունը չդարձնելով հատուկ ուսումնասիրման առարկա՝ արձանագրենք, որ գրականության մեջ կայունացած է այն միտքը, որ կազմակերպումը կառավարման գործառնույթ է: Դեռ ավելին՝ «կազմակերպումը կառավարումն ապահովող գործառնույթ է՝ ուղղված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելուն»<sup>4</sup>: Գրականության մեջ լայնորեն կիրառվում է նաև «կառավարման կազմակերպում» արտահայտությունը:

Վերոգրյալը, կարծում ենք, հիմք է տալիս Օրենքի հոդված 19-ում կիրառված «կազմակերպում» եզրույթը դիտարկել հենց կառավարման գործառնույթի, իսկ «պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը»՝ պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում իրականացվող պետական կառավարման կազմակերպման տեսանկյունից: Ընդ որում՝ պետական գաղտնիքի պաշտպանության կառավարումը պետք է դիտել որպես ազգային անվտանգության ոլորտում պետական կառավարման բաղկացուցիչ մաս:

Հասկանալի է, որ ինչպես այլ երկրներում, Հայաստանում ևս պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը դիտվում է որպես դրա համար անհրաժեշտ պայմանների ստեղծում և, պետական գաղտնիքի կարևորությունից ելնելով, իրականացվում է պետական իշխանության բարձրագույն մարմինների կողմից՝ ոլորտի նորմատիվ իրավական կարգավորման, զանազան ծրագրերի, ընթացակարգերի մշակման, դրանց իրականացման ֆինանսավորման և այլ ձևերով: Ընդ որում, եթե կազմակերպումը դիտենք ավելի նեղ առումով,

ապա դա գործադիր իշխանության գործունեությունն է նշված ոլորտում: Այդ են վկայում, մասնավորապես, Օրենքի հոդված 8-ով պետական գաղտնիքի պաշտպանության համակարգում կառավարությանը վերապահված լիազորությունները Օրենքի կատարումն ապահովելու, ոլորտում պետական ծրագրեր մշակելու և հաստատելու, ինչպես նաև դրանց գործնական իրականացումն ապահովելու ուղղությամբ, Օրենքի հոդված 20-ով սահմանված պետական գաղտնիքի պաշտպանությանն ուղղված միջոցառումների ֆինանսավորման կարգը, որի համաձայն պետական գաղտնիքի պաշտպանության ֆինանսավորումն իրականացվում է «պետական բյուջեի միջոցների հաշվին»: Բյուջեն, ինչպես հայտնի է, Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում կառավարությունը, հետևաբար՝ որոշում նաև պետական ծախսերը պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում:

Այն, որ պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը երկրի բարձրագույն իշխանության խնդիրն է, վկայում են նաև պետական գաղտնիքի մասին այլ երկրների օրենսդրությունները, որոնցով այդ երկրների բարձրագույն իշխանության մարմիններն օժտված են պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպման (ոլորտի կառավարման) լայն լիազորություններով<sup>5</sup>: Բերենք միայն Լատվիայի Հանրապետության օրինակը, որի «Պետական գաղտնիքի մասին» օրենքի հոդված 7-ում (վերնագրված է՝ «Պետական գաղտնիքի պաշտպանությունը») ուղղակիորեն սահմանված է՝ «պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը դրվում է նախարարների կաբինետի վրա»<sup>6</sup>:

Մեր կարծիքով, այնքան էլ հիմնավորված չէր օրենսդրական փոփոխությունների (ՀՕ 317, 318, 18.04.2002) արդյունքում տեղեկությունները պետական գաղտնիքի շարքը դասող և դրանց պաշտպանության ոլորտում լիազորություններ ունեցող սուբյեկտների ցանկից ՀՀ Ազգային ժողովի հանումը, քանի որ դա նշված հարաբերությունների օրենսդրական կարգավորում իրականացնող և այդ հարաբերություններում անմիջական մասնակցություն ունեցող, հետևապես պատասխանատվություն ստանձնող մարմին է (ԱԳՀ բոլոր երկրներում պետական գաղտնիքի պաշտպանության հստակ լիազորություններ են սահմանված ներկայացուցչական մարմինների համար):

Վերոնշյալից ակնհայտ է դառնում, որ «պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը» շատ ավելի լայն հասկացություն է, քան պետական գաղտնիքի պաշտպանության ուղղությամբ առանձին պետական մարմիններում, ձեռնարկություններում իրականացվող գործունեությունը, ինչպես սահմանված է Օրենքի հոդված 19-ում: Նշված հանգամանքը, կարծում ենք, ոչ միայն և ոչ այնքան հոդվածի վերնագրի և բովանդակության անհամապատասխանության խնդիր է: Դրանով նսեմանում է, եթե չասենք՝ աղավաղվում է պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպման, իսկ ավելի լայն իմաստով՝ ոլորտի կառավարման խնդիրը, ինչն իր հերթին չի կարող բացասաբար չանդրա-

դառնալ պետական գաղտնիքի պաշտպանության արդյունավետության վրա: Այդ իսկ պատճառով արձանագրենք, որ Հայաստանի Հանրապետությունում ևս, ելնելով պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում կառավարության լիազորություններից, պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը, այսինքն՝ ոլորտի կառավարումն ամենալայն ընդգրկման մեջ իրականացնում է երկրի բարձրագույն իշխանությունը՝ ի դեմս կառավարության, այլ ոչ թե առանձին հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարները: Վերջիններս միայն կազմակերպում են պետական գաղտնիքի պաշտպանությունը իրենց ղեկավարած առանձին պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների շրջանակներում, իսկ պաշտպանությունն անմիջականորեն իրականացնում են նշված հաստատությունները՝ իրենց կողմից հատուկ ստեղծված կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով: Այս իրողությունն իր հստակ ձևակերպումը պետք է գտնի նաև օրենսդրության մեջ:

Պետական գաղտնիքի անմիջական պաշտպանության պարտականությունը օրենսդրությամբ վերոհիշյալ հաստատությունների վրա դնելը, կարծում ենք, միանգամայն արդարացված է, քանի որ պետական գաղտնիքները ձևավորվում (մշակվում) են այդ հաստատություններում և միանգամայն տրամաբանական է, որ հենց դրանք էլ պետք է իրականացնեն իրենց իսկ կողմից ստեղծված (մշակված) տեղեկությունների պաշտպանությունը՝ ելնելով, մասնավորապես, դրանց կարևորությունից (գաղտնիության աստիճանից), իսկ ղեկավարները պետք է կազմակերպեն այդ գործընթացը տեղերում:

Արձանագրենք սակայն, որ Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպման և իրականացման հարցում, մեր կարծիքով, առկա է խնդրահարույց մի հարց, որին մանրամասն անդրադառնանք ստորև:

Ակնհայտ է, որ պետական գաղտնիքի պաշտպանությունը բավականաչափ բարդ գործընթաց է, որն առնչվում է տարաբնույթ խնդիրների՝ քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական, իրավական, ֆինանսական և այլն: Կարծում ենք, անհերքելի է նաև այն, որ նշված խնդիրները հնարավոր է ճիշտ համադրել և լուծել միայն ինքնին պետական գաղտնիքի և դրա պաշտպանության հարցերում պատշաճ գիտական մոտեցում դրսևորելու և մասնագիտական պատրաստվածություն և ապահովելու պարագայում: Ասվածն առավել կարևորվում է պետական գաղտնիքի պաշտպանությունը որպես պետության գործառնայն դիտարկելու տեսանկյունից: Մինչդեռ ՀՀ պետական մարմինների համակարգում չկա պետական գաղտնիքի պաշտպանության ուղղակի գործառնայնությունով օժտված համապետական որևէ մասնագիտացված մարմին կամ պաշտոն, իսկ ՀՀ իրավական համակարգը գործող որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի համար չի սահմանում այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում առանձին հիմնարկ-

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ձեռնարկությունների գործունեության համաձայնեցումն ու համակարգումը, ոլորտի օրենսդրության կատարելագործումը, կառավարության կողմից ծրագրերի, նորմատիվ իրավական ակտերի մշակմանը մասնագիտական օժանդակություն ցուցաբերելը, ինչպես նաև պետական գաղտնիքի պաշտպանության հետ անմիջականորեն չառնչվող այնպիսի հարցեր, ինչպիսիք են պետական գաղտնիքի տարածման հետևանքով պատճառված վնասի որոշումը, ինչն առ այսօր լուծված չէ, կադրերի պատրաստման կազմակերպումը, ուսումնական ծրագրերի մշակումը և բազմաթիվ այլ հարցեր, որոնք կարիք ունեն մասնագիտական մոտեցման: Հասկանալի է, որ կառավարությունը, հանդիսանալով քաղաքական մարմին և համարված լինելով քաղաքական (ոչ մասնագիտական) պաշտոններով, վերոհիշյալ խնդիրներն իրականացնել չի կարող, և նրա համար նման լիազորություններ սահմանված էլ չեն: Իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված միակ մասնագիտական մարմինները գործում են սուկ առանձին հիմնարկ-ձեռնարկությունների շրջանակներում՝ «հաշվի առնելով իրենց կողմից տարվող աշխատանքների առանձնահատկությունները» (Օրենքի 19-րդ հոդված):

Կառավարման տեսությունից հայտնի է այն կարևոր դերը, որ արդյունավետ կառավարման գործում հատկացված է կառավարման մարմիններին, դրանց իրավասությունների սահմանմանը, առանձին մարմինների իրավասությունների հստակ տարանջատմանը: Ցավոք, ՀՀ օրենսդրության մեջ չկա առանձնացված նորմ, որը համապարփակ ձևով սահմաներ պետական գաղտնիքի պաշտպանության մարմինները և դրանց իրավասությունները: Մինչդեռ մի շարք երկրներում ոչ միայն սահմանված են այդպիսի մարմիններ իրենց իրավասություններով, այլև դրանք իրավամբ դիտված են որպես մեկ միասնական համակարգի՝ «պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների համակարգի» կառուցվածքային տարրեր, որտեղ ցանկացած համակարգին բնորոշ ձևով հստակ սահմանված են ինչպես յուրաքանչյուր մարմնի իրավասությունները, այնպես էլ այդ մարմինների ստորակարգությունն ու փոխգործակցությունը մեկ ընդհանուր՝ պետական գաղտնիքի պաշտպանության նպատակով, համակարգ, որն ի վիճակի է նորմատիվ իրավական կարգավորման և վերահսկողական գործառնություններով ազդելով այլ պետական մարմինների վրա՝ ապահովել պետական գաղտնիքի պաշտպանությանն ուղղված միջոցառումների ողջ համալիրի իրականացումը: Կարծում ենք՝ Հայաստանի պարագայում հնարավոր չէ խոսել նման համակարգի գոյության մասին:

Ավանդը հիմնավորելու և մեր շարադրանքն ավելի առարկայական դարձնելու համար փորձենք ներկայացնել ԱՊՀ տարածաշրջանի մյուս երկրներում գործող պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների համակարգերը՝ նկատի ունենալով այդ երկրներում պետական գաղտնիքի պաշտպանության իրավական կարգավորման որոշակի ընդհանրությունները Հայաստանի հետ:

Ռուս հետազոտող Ռ.Վ.Կորսունը, ուսումնասիրելով ԱՊՀ երկրների պետական գաղտնիքի

մասին օրենսդրությունները, եկել է այն եզրահանգման, որ տարբեր երկրներում գործում են պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների տարբեր համակարգեր, ինչը բացատրում է դրանցում պետական կառավարման համակարգերի, վերջիններիս ձևավորման ավանդույթների, պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ծավալների, դրանց հետ առնչվող սուբյեկտների քանակի և այլ տարբերություններով:

Պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների առավել ընդարձակ համակարգ է սահմանված ՌԴ օրենսդրությամբ: Ռ.Վ.Կորսունը, իր աշխատանքում անդրադառնալով Ռուսաստանում պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների համակարգին, նշում է. «Պետական գաղտնիքի մասին օրենքի ընդունմամբ Ռուսաստանի Դաշնությունում ձևավորվել է պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների եռաստիճան համակարգ, որի վերին օղակը զբաղեցնում է մասնագիտացված կոլեգիալ մարմինը, որը համակարգում է պետական գաղտնիքի պաշտպանություն իրականացնող պետական իշխանության դաշնային մարմինների և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների պետական իշխանության մարմինների՝ պետական գաղտնիքի մասին դաշնային օրենսդրության կատարումն ապահովող պետական ծրագրերի, նորմատիվ իրավական ակտերի և մեթոդական փաստաթղթերի մշակման և կենսագործման նպատակով իրականացվող գործունեությունը»: Խոսքն այստեղ ՌԴ պետական գաղտնիքի պաշտպանության միջգերատեսչական հանձնաժողովի մասին է, որի կազմն իսկ կարող է վկայել այն բարձր տեղի ու դերի մասին, որ հանձնաժողովը զբաղեցնում է պետական իշխանության մարմինների համակարգում: Այսպես՝ հանձնաժողովի նախագահի պաշտոնը զբաղեցնում է Ռուսաստանի տեխնիկական և արտահանման վերահսկողության դաշնային ծառայության տնօրենը, նախագահի տեղակալների պաշտոնները՝ Անվտանգության դաշնային ծառայության տնօրենի և պաշտպանության նախարարի առաջին տեղակալները, հանձնաժողովի կազմի մեջ են մտնում նաև տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ՝ ղեկավարների կամ առաջին տեղակալների (տեղակալների) մակարդակով, իսկ հանձնաժողովի ընդհանուր ղեկավարումը, կանոնադրության համաձայն, իրականացնում է Ռուսաստանի Դաշնության նախագահը<sup>9</sup>:

Եռաստիճան այս համակարգի երկրորդ աստիճանում այն մարմիններն են, որոնք իրենց իրավասությունների շրջանակներում իրականացնում են պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում միջգերատեսչական լիազորություններ: Այդպիսիք են՝ Անվտանգության դաշնային ծառայությունը, Արտաքին հետախուզության ծառայությունը, Տեխնիկական և արտահանման վերահսկողության դաշնային ծառայությունը և այլն:

Երրորդ աստիճանում պետական գաղտնիքների օգտագործմամբ աշխատանքներ կատարող պետական իշխանության մարմիններն են, հիմնարկները, ձեռնարկություններն ու կազմակերպությունները, ինչպես նաև պետական գաղտնիքի

պաշտպանության գծով դրանց կառուցվածքային ստորաբաժանումները:

Նշենք նաև, որ Ռ-Դ օրենսդրությամբ հստակ տարանջատված են պետական գաղտնիքի պաշտպանության բոլոր մարմինների իրավասությունները՝ դրանց կրկնումը բացառելու նպատակով, իսկ ողջ համակարգի վերին օղակում, ինչպես նշեցինք, Պետական գաղտնիքի պաշտպանության միջգերատեսչական հանձնաժողովն է, որը կանոնադրությամբ օժտված է շուրջ քսան միջգերատեսչական (համապետական բնույթի) լիազորություններով, որոնք ընդհանրական ձևով կարելի է ներկայացնել այսպես՝ պետական գաղտնիքի մասին օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն, ավելացրած՝ օրենսդրության կատարելագործման խնդիրները:

Վրաստանում, ըստ էության, գործում է Ռ-Դ համակարգի պարզեցված տարբերակը: Այստեղ, «Պետական գաղտնիքի մասին» օրենքի համաձայն, «պետական գաղտնիքի պաշտպանությանն ուղղված կազմակերպչական միջոցառումներն ապահովող գործադիր իշխանության հատուկ լիազորված մարմին է հանդիսանում Պետական գաղտնիքի պաշտպանության պետական տեսչությունը, որը կանգնած է պետական գաղտնիքի պաշտպանության մարմինների համակարգի վերին օղակում: Հաջորդիվ՝ Վրաստանի ներքին գործերի նախարարությունն է (հակահետախուզության ղեկավարումն ենում) և հետախուզության պետական ղեկավարումն ենում, որոնցից առաջինը «գործադիր իշխանության մարմին է, որն իրականացնում է պետական գաղտնիքի պաշտպանության ապահովմանն ուղղված միջոցառումները և վերահսկում է դրանց կատարումը», իսկ երկրորդը՝ «գործադիր իշխանության հիմնարկություն է, որն իրականացնում է Վրաստանի սահմաններից դուրս տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների, կազմակերպությունների և գործուղման մեջ գտնվող, իրենց գործունեության բնույթով պետական գաղտնիք պարունակող տեղեկատվության հետ կապված անձանց կողմից պետական գաղտնիքի ռեժիմի պահպանության ապահովման միջոցառումներ»<sup>10</sup>: Վրաստանի պետական գաղտնիք տնօրինող մյուս մարմիններն օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում ապահովում են պետական գաղտնիքի պաշտպանության միջոցառումների իրականացումը:

Գործադիր իշխանության համակարգում պետական գաղտնիքի պաշտպանության հատուկ մասնագիտացված մարմիններ են գործում նաև Մոլդովայի (Պետական գաղտնիքի պաշտպանության միջգերատեսչական հանձնաժողովը), Ղազախստանի (Ղազախստանի Հանրապետության պետական գաղտնիքի պաշտպանության լիազորված պետական մարմինը), Տաջիկստանի (կառավարությանն առընթեր Պետական գաղտնիքի պաշտպանության գլխավոր վարչությունը) հանրապետություններում<sup>11</sup>:

Ուկրաինայի օրենսդրությամբ թեև նախատեսված չէ պետական գաղտնիքի պաշտպանության հատուկ մասնագիտացված մարմին, սակայն սահմանված է գաղտնիքների պաշտպանության

հարցերով փորձագետների ինստիտուտը, իսկ երկրի Անվտանգության ծառայությունը օժտված է միջգերատեսչական լայն իրավասություններով, մասնավորապես՝ համակարգում է վերոնշյալ փորձագետների գործունեությունը, վերահսկում է գաղտնիքի ռեժիմի ապահովումը և այդ նպատակով իրականացնում հակահետախուզական գործունեություն: Ուկրաինայի օրենսդրությամբ սահմանված է նաև, որ պետական մյուս մարմինները (այդ թվում՝ իրավապահ մարմինները) պարտավոր են գաղտնիքների հետ աշխատանքներ կատարող սուբյեկտների նկատմամբ իրենց գործողությունները համաձայնեցնել Անվտանգության ծառայության հետ՝ գաղտնիքների արտահոսքը կանխելու նպատակով:

ԱՊՀ-ի մյուս երկրների (մասնավորապես՝ Դրոգատանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի) պետական ապարատներում նույնպես առանձնացված չեն պետական գաղտնիքի պաշտպանության հատուկ մասնագիտացված մարմիններ: Այս երկրներում պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում հիմնական դերակատարներ են հանդիսանում անվտանգության ոլորտի լիազորված պետական կառավարման մարմինները՝ տարբեր ծավալի լիազորություններով: Հետաքրքրական է, սակայն, որ այս երկրների պետական գաղտնիքի մասին օրենքներով հստակ սահմանված են պետական գաղտնիքի պաշտպանության գործում անվտանգության ոլորտի լիազորված պետական կառավարման մարմինների իրավասությունները:

Վերադառնալով Հայաստանի օրինակին՝ դարձյալ նշենք, որ մեր հանրապետությունում ևս պետական գաղտնիքի պաշտպանության համակարգում ձևավորված չէ համապետական մասնագիտացված մարմին (պաշտոն)՝ միջգերատեսչական այնպիսի իրավասություններով, որոնք հնարավորություն կտային արդյունավետորեն լուծել վերն առաջադրված խնդիրները: Այնուամենայնիվ, վերլուծելով ՀՀ պետական մարմինների համակարգը և այս բնագավառում նրանց իրավասությունները, կարելի է արձանագրել, որ մեզանում ևս պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում առանցքային դերակատարություն ունի ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման մարմինը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը: Ըստ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի (ընդունված է 28.12.2001թ.)՝ ազգային անվտանգության մարմինները «Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն են և իրենց իրավասության սահմաններում ապահովում են անձի, հասարակության և պետության անվտանգությունը» («Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենք, հոդված 2):

Պետական գաղտնիքի պաշտպանության ոլորտում ազգային անվտանգության ծառայության մարմինների հիմնական իրավասությունները ևս ամրագրված են այդ օրենքով, որի 15-րդ հոդվածի դ) կետի համաձայն՝ ազգային անվտանգության մարմիններն իրավունք ունեն «օրենքով սահմանված կարգով տեղեկատվական անվտանգության ոլորտում իրականացնել պետական վերահսկողու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյուն»։ Նույն օրենքի 16-րդ հոդվածի ժ) կետի համաձայն՝ նրանք պարտավոր են «մասնակցել պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության վերաբերյալ միջոցառումների մշակմանը և իրականացմանը, վերահսկել պետական մարմիններում, զինվորական կազմավորումներում, կազմակերպություններում պետական և ծառայողական գաղտնիքի պահպանումը, սահմանված կարգով միջոցառումներ իրականացնել՝ կապված քաղաքացիներին պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններին առնչվելու թույլտվություն տալու հետ»։ Նկատենք, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում նույնպես պետական գաղտնիքի պաշտպանության գործում ազգային անվտանգության ծառայության մարմիններին վերապահված է վերահսկողության գործառույթը. «Պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության ապահովման միջգերատեսչական վերահսկողությունը հանրապետական գործադիր և տարածքային կառավարման մարմիններում, ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում իրականացնում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բնագավառի կառավարող պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով» (Օրենքի 25-րդ հոդված)։

Այսպիսով՝ ՀՀ օրենսդրությամբ պետական գաղտնիքի պաշտպանության գործում ազգային անվտանգության մարմիններն ընդհանուր առմամբ օժտված են հետևյալ հիմնական իրավասություններով.

- պետական գաղտնիքի պաշտպանության նկատմամբ միջգերատեսչական վերահսկողության իրականացում,
- մասնակցություն պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության ուղղությամբ միջոցառումների մշակմանն ու իրականացմանը,
- մասնակցություն քաղաքացիներին պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններին առնչվելու թույլտվություն տալու գործընթացին։

Ավելացնենք, որ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության ապահովման անհրաժեշտությունը» դիտվում է որպես հակահետախուզական գործունեության հիմք («Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենք, 11-րդ հոդված, 2-րդ մասի գ) կետ)։ Նկատի ունենալով, որ հակահետախուզական գործունեությունը, որն իրականացվում է հիշյալ օրենքով, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով և ազգային անվտանգության մարմինների ներքին գերատեսչական իրավական ակտերով սահմանված կարգով, մշտապես իրականացվող գործունեություն է՝ կապված օտարերկրյա հետախուզություններից սպասվող վտանգների մշտական առկայության հետ, ուստի պետական գաղտնիքի պաշտպանությունը նույնպես մշտապես իրակա-

նացվող գործունեություն է։

Ինչպես տեսնում ենք՝ ԱԱԾ-ի իրավասությունները բավականաչափ լայն են, սակայն ըստ էության դրանք ևս բավարար չեն այն որպես պետական գաղտնիքի պաշտպանության մասնագիտացված մարմին դիտելու համար։ Խնդիրն այն է, որ մասնագիտացված մարմինն օժտված պետք է լինի նաև այլ՝ ազգային անվտանգության մարմիններին ոչ այնքան բնորոշ իրավասություններով։ Փորձենք մանրամասնել ասվածը։

Պետական գաղտնիքի պաշտպանությունը պետության գործունեության ուղղություն է, գործառույթ (ընդ որում՝ մշտապես իրականացվող) նույն այդ պետության, հասարակության և անհատի հանդեպ։ Հասկանալի է, որ պետական գաղտնիքի պաշտպանությունն իրականացվում է համաձայն օրենսդրության պահանջների, որոնք պարտադիր են կատարման բոլոր սուբյեկտների կողմից, հետևաբար՝ պետական գաղտնիքների պաշտպանության գործում միասնական պետական քաղաքականությունն ու դրա արդյունավետությունն ապահովված կարելի է համարել, եթե հետևել միայն նշված սուբյեկտների կողմից օրենսդրության պահանջների կատարմանը։ Սակայն օրենսդրության գործնական կիրառման փորձն ինչպես այս, այնպես էլ այլ ոլորտներում ցույց է տալիս, որ առանց գործի պատշաճ կազմակերպման, փոխգործողությունների համաձայնեցման և համակարգման (այսինքն՝ կառավարման), նշված պահանջների գործնական կիրառման ընթացքում կարող են ի հայտ գալ և հաճախ ի հայտ են գալիս լուրջ բացթողումներ։ Այսպես՝ առկա են մնում այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են՝

- պետական գաղտնիքի պաշտպանության վերաբերյալ օրենսդրության կատարելագործումը,
- օրենսդրության գործնական կիրառության ընթացքում ի հայտ եկած թերությունների համապարփակ վերլուծությունը,
- դրա հիման վրա առաջարկություններ ներկայացնելը,
- պետական գաղտնիքի պաշտպանությամբ զբաղվող պաշտոնատար անձանց պատրաստումը, վերապատրաստումը, որակավորման բարձրացումը։

Եթե, դուրս գալով պետական գաղտնիքի գուտ պաշտպանության շրջանակներից, փոքր-ինչ ընդլայնենք հարցերի շրջանակը, ապա պետք է նշենք նաև այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են՝

- պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի մշակումը և վերամշակումը,
- պետական գաղտնիքի տարածման հետևանքով պետությանը, ինչպես նաև տեղեկությունը գաղտնագրելու հետևանքով տեղեկության սեփականատիրոջը հասցված վնասի չափերը որոշելու կարգը և այլն։

Սրանք հարցեր են, որոնց լուծումը հնարավոր է միայն մասնագիտական մոտեցմամբ և այնպիսի մարմնի (կամ պաշտոնատար անձի) կողմից, որ ստեղծված է (նշանակված է) հենց այդ նպատակով։ Ուստի, մեր կարծիքով, նպատակահարմար է առանձին նորմով սահմանել պետական գաղտնիքի

www.lawinstitute.am

պաշտպանության մարմինները և դրանց իրավասությունները, մասնագիտացված մարմնի բացը լրացնելու համար կամ ստեղծել նման հատուկ մարմին, կամ ազգային անվտանգության մարմիններն օրենսդրությամբ օժտել լրացուցիչ լիազորություններով, մասնավորապես՝

1. պետական մարմինների, հիմնարկ-ձեռնարկությունների, կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական գաղտնիքի պաշտպանությանն ուղղված գործունեության համակարգում,

2. պետական գաղտնիքի պաշտպանության իրավական կարգավորման և պետական գաղտնիքի պաշտպանության համակարգի կատարելագործման վերաբերյալ ՀՀ նախագահին, վարչապե-

տին առաջարկությունների ներկայացում,

3. պետական գաղտնիքն այլ պետությանը կամ միջազգային կազմակերպությանը փոխանցելու հնարավորության հարցի քննարկում և այդ կապակցությամբ մասնագիտական (փորձագիտական) եզրակացության տրամադրում կառավարությանը,

4. պետական գաղտնիքի պաշտպանության ուղղությամբ աշխատանքներ իրականացնող մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման գործունեության կազմակերպում և այլն:

<sup>1</sup> Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1974թ., էջ 3:

<sup>2</sup> Տե՛ս «Юридическая энциклопедия». М., 1997. С. 292.

<sup>3</sup> Տե՛ս Котенев А.А., Лекарев С.В. «Современный энциклопедический словарь по безопасности». М., 2001. С. 449.

<sup>4</sup> Տե՛ս մասնավորապես Кнорринг В.И. «Теория, практика и искусство управления». М., 2007. С. 50, Միրզոյան Վ. «Կառավարման փիլիսոփայություն», Եր., 2007, էջ 11-13:

<sup>5</sup> Տե՛ս [www.medialaw.ru](http://www.medialaw.ru) կայքի նշված էջը:

<sup>6</sup> Տե՛ս [www.medialaw.ru/exussrlaw/l/lv/secret.htm](http://www.medialaw.ru/exussrlaw/l/lv/secret.htm):

<sup>7</sup> Տե՛ս Корсун Р.В. «Правовой институт государственной тайны и его отражение в законодательстве государств, входящих в СНГ». Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2007. С. 146.

<sup>8</sup> Տե՛ս Նույն տեղում, էջ 137:

<sup>9</sup> Տե՛ս Նույն տեղում, էջ 138, տես նաև՝ «Положение о Межведомственной комиссии по защите государственной тайны», «Государственная тайна и ее защита в Российской Федерации». Под общ. ред. Вуса М.А. и Федорова А.В. СПб, 2007, հավելված 2, էջ 675:

<sup>10</sup> Տե՛ս [www.medialaw.ru/exussrlaw/l/lv/secret.htm](http://www.medialaw.ru/exussrlaw/l/lv/secret.htm):

<sup>11</sup> Տե՛ս [www.medialaw.ru](http://www.medialaw.ru) կայքի նշված էջերը:

РЕЗЮМЕ

*Проблемы организации защиты государственной тайны в Республике Армения*

В статье автор анализирует проблемы правового регулирования организации защиты государственной тайны в РА и приходит к выводу, что организация защиты государственной тайны не нашла должного отражения в законодательстве как отдельная функция государства. В законодательстве РА организация защиты государственной тайны рассматривается только на уровне отдельных органов, учреждений, предприятий и организаций, что существенно снижает важность проблемы и чревато опасностью возникновения разногласий, несогласованных действий. Этому также способствует отсутствие в системе государственных органов специализированного органа или должности по защите государственной тайны, наделенного полномочиями курации и систематизации действий в указанной области. В законодательстве не закреплена также норма, определяющая органы защиты государственной тайны и их полномочия в целостном виде.

В статье проблема обсуждается в контексте сопоставления законодательства стран СНГ и РА.

SUMMARY

*The problems of organization of the State Secret Defence in the Republic of Armenia*

The author analyzes low regulation of the organization of state secret defence and concludes that in the legislation it doesn't have proper reflection as a state function, it is considered only in the level of establishment-enterprises and organizations and in the level of their leaders, which reduces the importance of the problem and it is full of the different kinds of disagreement in the field. The fact in the system of the national organs there is not national-wide any specialized organ or position of state secret defence, which has authority of monitoring and systematization on other organs, which sets up the defence of national defence and its jurisdictions.

In the article the problem is considered in the context of comparison of legislation on UIC and RA.